ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
0012, քաղ.Երևան, Վ.Վաղարշյան 13ա Հեռ. /37411/ 90-00-12, 093 12 19 12

N 18-115կգ-19
11-ը փետրվարի, 2019թ.

Ռոբերտ Սերոբի Դավթյանին

[redacted]

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի կարգով հայտնում եմ, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննված թիվ 24102318 քրեական գործով որոշում է կայացվել քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքով:

Պարզաբանում եմ, որ քրեական հետապնդում չիրականացնելու և գործով վարույթը կարճելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին՝ որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի կայացրած որոշումը՝ դրա պատճենը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում կամ, եթե 7 օրվա ընթացքում դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոքը ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ կարող է բողոքարկվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան:

Առդիր՝ 9 թերթ:

ՀՀ հատուկ քննչական ծառայության
հատկապես կարևոր գործերի քննիչ՝ Վ.Մ.Սիմոնյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին

11-ը փետրվարի, 2019թ. ք.Երևան

ՀՀ հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերի քննիչ Վ.Մ.Սիմոնյանս, քննարկելով վարույթիս թիվ 24102318 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2018 թվականի դեկտեմբերի 4-ին ժամը՝ 16:15-ին սահմաններում, ՀՀ ԱԺ 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններին ռեյտինգային կարգով պատգամավորության թեկնածու առաջադրված <<Քաղաքացու որոշում>> սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամներ Մարիամ Զախոյանը և Ռոբերտ Դավթյանը քարոզչություն կատարելու իրենց լիազորություններն իրականացնելիս գտնվել են Ապարան քաղաքի <<Գնթունիկ>> կոչվող սուպերմարկետի մոտ, որտեղ բազմաթիվ քաղաքացիներին քարոզչական բնույթի գրքույկներ են բաժանել:

Այդ ընթացքում նույն սուպերմարկետի աշխատակիցը, խոչընդոտելով ընտրությանը մասնակցող հիշյալ անձանց լիազորությունների իրականացմանը, պահանջել է նրանցից հեռանալ, ապա մերժում ստանալով, հիշյալ միջադեպը տեսանկարահանելու պատրվակով վիճաբանության մեջ է մտել նրանց հետ, վերցրել Մարիամ Զախոյանի բջջային հեռախոսը, նրանց հրավիրել սուպերմարկետ և տևական ժամանակ պարզաբանումներից հետո վերադարձրել է հեռախոսը, որպիսի գործողություններով խոչընդոտել է Մարիամ Զախոյանի և Ռոբերտ Դավթյանի նախընտրական քարոզչություն իրականացնելու լիազորությունների իրականացմանը:

Դեպքի առթիվ 2018 թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 24102318 քրեական գործը:

2018 թվականի դեկտեմբերի 20-ից հիշյալ քրեական գործով նախաքննությունը շարունակվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում:

Թիվ 24102318 քրեական գործով կատարված լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ նախաքննության ընթացքում պարզվել և հիմնավորվել է հետևյալը.

Նախաքննության ընթացքում որպես վկա հարցաքննվել է Մարիամ Զախոյանը, ով ցուցմունքով հայտնել է, որ 2018 թվականի դեկտեմբերի 9-ին տեղի ունեցած ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ժամանակ որպես Արագածոտնի մարզի ռեյտինգային թեկնածու ընգրկված է եղել <<Քաղաքացու որոշում>> սոցիալ-դեմոկրատական կուսակցության կազմում և որպես պատգամավորի թեկնածու առաջադրել է իր թեկնածությունը:

2018 թվականի դեկտեմբերի 4-ին, նույն կուսակցության պատգամավորի թեկնածու Ռոբերտ Դավթյանի հետ, մեկնել են Արագածոտնի մարզի Ապարան քաղաք նախընտրական քարոզարշավ իրականացնելու նպատակով: Հիշյալ օրը քարոզարշավ իրականացնելով շրջագայել են Ապարան քաղաքում, որից հետո՝ ժամը 16:30-ի սահմաններում, քարոզարշավը շարունակել են Ապարան քաղաքում գտնվող <<Գնթունիկ>> սուպերմարկետի մոտակայքում և որպես խորհրդանիշ քաղաքացիներին ներկայացրել են մանդարին և բուկլետ:

Նշել է, որ հիշյալ սուպերմարկետի մոտ գտնվելու ժամանակ իրեն է մոտեցել մի տղամարդ և պահանջել հեռանալ սուպերմարկետի մոտից, որն իրեն տարօրինակ է թվացել, քանի որ օրենքով սահմանված կարգով նախընտրական քարոզարշավ են իրականացրել և սուպերմարկետ չեն մտել: Այնուհետև, տղամարդուց պահանջել է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ և հիմքեր, թե ինչի համար պետք է իրենք հեռանան այդ տարածքից, միաժամանակ հայտնել է, որ պատգամավորի թեկնածուներ են և քարոզարշավ են իրականացնում: Սակայն, տղամարդը տեղեկանալով պատգամավորի թեկնածու լինելու և քարոզարշավ իրականացնելու մասին շարունակել է իրենցից պահանջել հեռանալ սուպերմարկետի տարածքից, որից հետո ինքը բջջային հեռախոսով սկսել է տեսանկարահանել և շարունակել է պահանջել ներկայացնել հիմքեր այդ տարածքում քարոզարշավ չիրականացնելու վերաբերյալ: Սակայն, նույն տղամարդը, ով հետագայում տեղեկացել է, որ հանդիսանում է Ապարան քաղաքի բնակիչ Հայկ Կիրակոսյանը, ձեռքով հարվածել և գետնին է գցել բջջային հեռախոսը, իսկ սուպերմարկետի մոտ կանգնած մեկ այլ տղամարդ վերցնելով այն տվել է Հայկ Կիրակոսյանին: Վերջինս բջջային հեռախոսը վերցնելով մտել է սուպերմարկետ և բարձրացել երկրորդ հարկ: Հայկ Կիրակոսյանի հետևից երկրորդ հարկ է բարձրացել նաև Ռոբերտ Դավթյանը, իսկ ինքը սպասել է առաջին հարկում: Որոշ ժամանակ անց բջջային հեռախսը գետնից վերցրած տղամարդն իջնելով առաջին հարկ հետ է վերադարձրել այն իրեն: Այնուհետև առաջին հարկ է իջել նաև Ռոբերտ Դավթյանը:

Հայտնել է, որ դեպքից որոշ ժամանակ անց, Ռոբերտ Դավթյանի կողմից վարվող ավտոմեքենայով հեռացել են Ապարան քաղաքից: Ճանապարհին տեղի ունեցածի մասին հեռախոսազանգի միջոցով հայտնել է <<Քաղաքացու որոշում>> սոցիալ-դեմոկրատական կուսակցության նախընտրական շտաբի ղեկավար Գոռ Հակոբյանին, ով էլ զանգահարել է ոստիկանություն և հայտնել տեղի ունեցած դեպքի մասին:

Մարիամ Չախոյանը վարույթն իրականացնող մարմնին է ներկայացրել բջջային հեռախոսի միջոցով իր կողմից կատարված թվով երկու տեսագրություններ, որոնք ենթարկվել են զննության և պարզվել է, որ Մարիամ Չախոյանը տեսանկարահանելու ընթացքում իր և Ռոբերտ Դավթյանի կողմից պատգամավորի թեկնածու լինելու վերաբերյալ որևէ տվյալ չի հայտնել, այլ հայտնել է, որ ինքը լրագրող է:

Վերը նշվածի կապակցությամբ լրացուցիչ հարցաքննվել է Մարիամ Չախոյանը և հայտնել, որ ինքն ունի նաև լրագրողի մասնագիտություն, այդ իսկ պատճառով է հայտնել, որ լրագրող է:

Մարիամ Չախոյանի ցուցմունքին հիմնականում նույնաբովանդակ ցուցմունք է տվել Ռոբերտ Դավթյանը, հավելելով, որ ինքը ներկա չի գտնվել երբ Մարիամ Չախոյանը Հայկ Կիրակոսյանին հայտնել է, որ իրենք պատգամավորի թեկնածուներ են և նախընտրական քարոզարշավ են իրականացնում: Հայկ Կիրակոսյանի և Մարիամ Չախոյանի միջև տեղի ունեցած միջադեպը տեսել ու մոտեցել է մի փոքր ուշ: Նշել է նաև, որ տարածքում եղել են ոստիկանության համազգեստով ծառայողներ, ովքեր տեսնելով միջադեպը չեն միջամտել, այլ հեռացել են սուպերմարկետի տարածքից:

Որպես վկա հարցաքննվել է <<Քաղաքացու որոշում>> սոցիալ-դեմոկրատական կուսակցության նախընտրական շտաբի ղեկավար Գոռ Հակոբյանը, ով ցուցմունքով հայտնել է, որ 2018 թվականի դեկտեմբերի 4-ին պատգամավորի թեկնածուներ Մարիամ Չախոյանը և Ռոբերտ Դավթյանը նախընտրական քարոզարշավ իրականացնելու նպատակով մեկնել են Արագածոտնի մարզի Ապարան քաղաք: Նույն օրը Մարիամ Չախոյանից տեղեկացել է, որ քարոզարշավ իրականացնելու ժամանակ <<Գնթունիկ>>

սուպերմարկետի մոտ մի տղամարդ խոչընդոտել է նրա այդ լիազորությանը՝ պահանջելով այլևս այդ հատվածում քարոզարշավ չիրականացնել:

Տեղեկանալով այդ մասին զանգահարել է ոստիկանություն և հայտնել տեղի ունեցած դեպքի վերաբերյալ:

Հայկ Կիրակոսյանը հարցաքննվել է որպես վկա և ցուցմունք տվել այն մասին, որ 2018 թվականի դեկտեմբերի 4-ին գտնվել է աշխատանքի վայրում՝ <<Գնթունիկ>> սուպերմարկետում: Հիշյալ օրը մոտավորապես ժամը՝ 16:00-ի սահմաններում, սուպերմարկետի հաճախորդներից մեկը մտնելով սուպերմարկետ հայտնել է, որ դրսում <<Եհովայի>> վկաները քարոզչություն են իրականացնում, դրանից հետո դուրս է եկել սուպերմարկետից և հանդիպել մի կնոջ: Նրանցից պահանջել է սուպերմարկետի մոտից հեռանալ, քանի որ հաճախորդները տեսնելով քարոզչությունը խուսափել են սուպերմարկետից գնումներ կատարելուց: Նշված կինն իրենից պահանջել է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ, սակայն ինքը հրաժարվել է և կրկին պահանջել նրանից հեռանալ սուպերմարկետի դիմացի հատվածից: Ընթացքում հեռախոսազանգ է ստացել և զրուցելով քայլել է սուպերմարկետի դիմացով, իսկ կինը, ով հետագայում տեղեկացել է, որ հանդիսանում է Մարիամ Զախոյանը, իրենից շարունակել է պահանաջել անձը հաստատող փաստատթուղթ ներկայացնել: Հեռախոսազրույցն ավարտելուց հետո թեքվել և նկատել է, որ իրեն տեսանկաարահանում է: Ձեռքով հեռախոսը մի կողմ տանելու ժամանակ նշված կինը կտրուկ շարժում է կատարել, որի հետևանքով հեռախոսն ընկել է գետնին: Ինքը վերցնելով այն մտնել է սուպերմարկետ և բարձրացել երկրորդ հարկ, իր հետևից երկրորդ հարկ է բարձրացել նաև Մարիամ Զախոյանի հետ գտնված տեղամարդը, ով հետագայում տեղեկացել է, որ հանդիսանում է Ռոբերտ Դավթյանը:

Հայտնել է, որ սուպերմարկետի երկրորդ հարկում ինքն ու Ռոբերտ Դավթյանը զրուցել են միմյանց հետ, եկել ընդհանուր հայտարարի, որից հետո ինքը հետ է վերադարձրել Մարիամ Զախոյանի բջջային հեռախոսը, իսկ Ռոբերտ Դավթյանը ներողություն է խնդրել Մարիամ Զախոյանի պահվածքի համար:

Նշել է, որ իրեն ոչ ոք չի հայտնել, որ Մարիամ Զախոյանը և Ռոբերտ Դավթյանը հանդիսանում են պատգամավորի թեկնածուներ, այդ մասին տեղեկացել է երեկոյան ոստիկանության Ապարանի բաժնում բացատրություն տալու ժամանակ, իսկ Մարիամ Զախոյանի բջջային հեռախոսը վերցրել է տեսագրությունը ջնջելու նպատակով:

Կտրականապես հերքել է իր կողմից պատգամավորի թեկնածուների նախընտրական քարոզարշավ իրականացնելու գործընթացն իր կողմից խոչընդոտելու հանգամանքը:

Որպես վկա հարցաքննվել է Դավիթ Սարգսյանը, ով ցուցմունքով հայտնել է, որ 2018 թվականի դեկտեմբերի սկզբներին, երբ գտնվել է <<Գնթունիկ>> սուպերմարկետում և գնումներ կատարելիս է եղել, մի պահ դուրս է եկել սուպերմարկետից ծխելու և նկատել է, որ սուպերմարկետի դիմաց քաղաքացիներ են հավաքված: Հավաքված քաղաքացիների մեջ եղած ակնոցներով, մոտ 40 տարեկան տղամարդու խոսալաձևից և պահվածքից իր մոտ տպավորություն է առաջացել, որ այդ տղամարդը <<Եհովայի>> վկա է: Այնուհետև, նույն տղամարդուն հարցրել է այդ մասին, որին ի պատասխան տղամարդը կեսակատակ հայտնել է, որ <<Եհովայի>> վկա է: Ընթացքում բջջային հեռախոսը ձեռքին մի կին սկսել է տեսանկարահանել իրեն, և տեսնելով դա, նրանից պահանջել է չտեսանկարահանել, որին ի պատասխան կինը հայտնել է, որ լրագրող է, դրա համար է տեսանկարահանում: Ինքն ամոթանք է տվել, ասել է որ լրագրողների անունն են վարկաբեկում և առաջարկել գնալ այլ տեսանկարահանելու: Մոտ 30 րոպե կինն ու տղամարդը սուպերմարկետի մոտ սպասելուց հետո հեռացել են:

Հայտնել է, որ ինքը Հայկ Կիրակոսյանի և Մարիամ Չախոյանի միջև տեղի ունեցած միջադեպին ներկա չի գտնվել, բացի այդ, Մարիամ Չախոյանը և Ռոբերտ Դավթյանն իր ներկայությամբ չեն հայտնել, որ պատգամավորի թեկնածուներ են:

Որպես վկա հարցաքննվել է <<Գնթունիկ>> սուպերմարկետի մենեջեր Տիգրան Հարությունյանը, ով ցուցմունքով հայտնել է, որ 2018 թվականի դեկտեմբերի 4-ին, գտնվել է <<Գնթունիկ>> սուպերմարկետում: Նույն օրը կեսօրից հետո, երբ ինքն ու սուպերմարկետի աշխատակից Հայկ Կիրակոսյանը գտնվել են այտեղ, հաճախորդներից մեկը, ում ինքը չի ճանաչել, ընդհանուր հայտնել է, որ դրսում աղանդավորները քարոզչություն են իրականացնում: Դրանից հետո Հայկի հետ դուրս են եկել սուպերմարկետից, ապա նկատել է, որ մի կին ու տղամարդ կանգնեցնում են քաղաքացիներին և զրուցում: Հայկը մոտեցել է նշված կնոջը և հայտնել, որ գնան ու քարոզչությունն իրականացնեն դիմացի մայթում, քանի որ քաղաքացիները խուսափել են սուպերմարկետ մտնելուց ու գնումներ կատարելուց: Կինը, ով հետագայում տեղեկացել է, որ հանդիսանում է Մարիամ Չախոյանը, սկսել է տեսանկարահանել Հայկին, որի ընթացքում նա հեռախոսով զրուցելիս է եղել: Մի պահ թեքվելով և տեսնելով, որ Մարիամ Չախոյանը տեսանկարահանում է, նա ձեռքով փոձել է հեռախոսը մի կող տանել, սակայն Մարիամ Չախոյանի կողմից կտրուկ շարժում կատարելու հետևանքով բջջային հեռախոսը վայր է ընկել գետնին: Ինքը վերցնելով բջջային հեռախոսը տվել է Հայկին և միասին մտել են սուպերմարկետ ու բարձրացել երկրորդ հարկ: Իրենց հետ երկրորդ հարկ է բարձրացել նաև Մարիամ Չախոյանի հետ գտնված տղամարդը՝ Ռոբերտ Դավթյանը: Սուպերմարկետի երկրորդ հարկում Հայկն ու Ռոբերտը զրուցել են միմյանց հետ, ապա Հայկը հետ է վերադարձրել Մարիամ Չախոյանի բջջային հեռախոսը:

Հայտնել է, որ ոչ ինքը, ոչ էլ Հայկ Կիրակոսյանը տեղյակ չեն եղել, որ Մարիամ Չախոյանը և Ռոբերտ Դավթյանը պատգամավորի թեկնածուներ են:

Որպես վկաներ հարցաքննվել են ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Ապարանի բաժնի ՊՊԾ դասակի ոստիկաններ Արտուշ Սահակյանը և Տարոն Մալխասյանը, ովքեր հիմնականում նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել այն մասին, որ 2018 թվականի դեկտեմբերի 4-ին ընդգրկվել են վերակարգում և ծառայություն են իրականացրել Ապարան քաղաքի Բաղրամյան փողոցում, որտեղ գտնվում է <<Գնթունիկ>> սուպերմարկետը: Նույն օրը՝ ժամը 17:00-ին սահմաններում, երբ գտնվել են սուպերմարկետից մոտ 200 մետր հեռավորության վրա գտնվող Ապարան քաղաքի հրապարակում, ոսիկանության Ապարանի բաժնի հերթապահ մասից հայտնել են, որ <<Գնթունիկ>> սուպերմարկետի մոտ դեպք է տեղի ունեցել: Անմիջապես գնացել են նշված սուպերմարկետ, քաղաքացիներից հետքրքրվել են, թե ինչ է տեղի ունեցել, սակայն տվյալներ չստանալով գնացել են Ապարանի ոստիկանություն, որտեղ տեղեկացել են, որ սուպերմարկետի աշխատակիցներից մեկը խոչընդոտել է պատգամավորի թեկնածուների քարոզարշավ իրականացնելու գործընթացին: Նշել են, որ իրենք միջադեպին ներկա չեն գտնվել և իրեցից բացի այդ օրը Ապարան քաղաքի Բաղրամյան փողոցում ոստիկանության ծառայողներ ծառայություն չեն իրականացրել:

Որպես վկաներ հարցաքննվել են Ալվարդ Բաղդասարյանը և Թեմուր Տալոյանը, ովքեր հիմնականում նույնաբովանդակ ցուցմունքներով հայտնել են, որ Մարիամ Չախոյանը և Ռոբերտ Դավթյանը որևէ կերպ չեն տեղեկացրել, որ իրենք պատգամավորի թեկնածուներ են, այլ տպավորությունն այնպիսին է եղել, որ վերջիններս հանդիսանում են <<Եհովայի>> վկաներ:

Որպես վկաներ հարցաքննվել են նաև Դավիթ և Ռոման Ենոքյանները, ովքեր քրեական գործի համար ապացուցողական նշանակություն ունեցող տվյալներ չեն հայտնել:

Կատարվել են առերես հարցաքննություններ՝ Հայկ Կիրակոսյանի և Ռոբերտ Դավթյանի, Հայկ Կիրակոսյանի և Մարիամ Չախոյանի միջև, որոնց ընթացքում կողմերը պնդել են իրենց ցուցմունքները:

Կատարվող քննչական գործողություններին զուգահեռ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու նպատակով հանձնարարություն է տրվել ոստիկանության Արագածոտնի մարզային վարչությանը: Ստացված պատասխան դրության համաձայն՝ դեպքին ականատես անձանց ինքնությունները պարզվել են և հարցաքննվել սույն քրեական գործի շրջանակներում:

ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի, այցելուի, լիազոր ներկայացուցչի, հանրաքվեի նախաձեռնող խմբի ներկայացուցչի, վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, տեխնիկական սարքավորումն սպասարկող անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար:

Հանցագործության օբյեկտը ՀՀ քաղաքացիների ընտրական կամ հանրաքվեի իրավունքի և ընտրական հանձնաժողովների աշխատանքների ու ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների ազատ իրականացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Հանցագործության օբյեկտիվ կողմը երկընտրելի է և բնութագրվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ՝

1) քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելով,

2) ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելով,

3)ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելով,

4) նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելով:

Խոչընդոտել նշանակում է ցանկացած եղանակով որոշակի արգելքներ, խոչընդոտներ ստեղծելը:

Քննարկվող հանցագործությունը ձևական է՝ հանցանքն ավարտված է համարվում ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովի աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու պահից:

Սուբյեկտիվ կողմից հանցանքը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ:

Հոդված 149-ի 2-րդ մասով որպես քննարկվող հանցագործության ծանրացուցիչ հանգամանքներ նախատեսված են նույն արարքները, որոնք՝

1) կատարվել են գույքին վնաս պատճառելով կամ պատճառելու սպառնալիքով,

2) կատարվել են նյութապես շահագրգռելով,

3) զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

4) կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով,

5) կատարվել են մի խումբ անձանց կողմից՝

6) զուգորդվել է անձին ազատությունից զրկելով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

ՀՀ Վճռաբեկ դատարանը Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ 2010թ. փետրվարի 12-ի թիվ ԵՔՐԴ/0632/01/08 որոշման մեջ դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ (...) Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ (...):

ՀՀ Վճռաբեկ դատարանը, Սիրակ Սաքանյանի վերաբերյալ 2011թ. դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշմամբ համեմատական վերլուծության ենթարկելով ապացուցման առարկա և ապացույցների բավարարություն հասկացությունները, անդրադառնալով վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքին, անմեղության կանխավարկածին, դատավարական որոշումների հիմնավորվածությանն ու պատճառաբանվածությանը, նշել է, որ (...) եթե ապացուցման առարկան ցույց է տալիս, թե ինչ է անհրաժեշտ պարզել յուրաքանչյուր քրեական գործով, ապա ապացույցների բավարարությունը կապված է այն ապացուցողական նյութի հետ, որը վերաբերում է ապացուցման առարկային և թույլ է տալիս այդ հանգամանքների մասին գալ արժանահավատ հետևության: Որոշելով ապացույցների բավարարությունը՝ վարույթն իրականացնող մարմինները լուծում են քրեական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների հետազոտության խորության աստիճանի հետ կապված հարցերը, մասնավորապես՝ այն, թե ինչ աստիճանի պետք է մանրացվի յուրաքանչյուր հանգամանքը, և ինչ ծավալի ապացույցներ են անհրաժեշտ այդ հանգամանքները հավաստի պարզելու և դրա հիման վրա այս կամ այն դատավարական որոշումը կայացնելու համար: Այսպիսով՝ ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը (...):

Զարգացնելով հիշյալ իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի վերաբերյալ 2014թ. հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշմամբ արձանագրել է, որ (...) Ներքին համոզմունքը սուբյեկտիվ-օբյեկտիվ կատեգորիա է: Այն ապացույցների գնահատումն իրականացնող սուբյեկտի գիտակցված և ողջամիտ համոզվածությունն է իր իսկ կողմից կայացված որոշման հիմնավորվածության մեջ (սուբյեկտիվ բնույթ): Այդպիսի համոզվածությունը պետք է ձևավորված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունքում և հիմնվի թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցությամբ հաստատված փաստերի վրա, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ ողջամտորեն կձևավորեն նույն համոզվածությունը (օբյեկտիվ բնույթ): Ապացույցի արժանահավատության հատկանիշը նույնպես վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը, որին վերաբերում է նաև ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված

տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Գործի լուծման համար բավարար ապացույցներ ասելով՝ պետք է հասկանալ թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը, անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր համոզվածություն անձի մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև կհաստատի գործով ապացուցման առարկան կազմող մյուս բոլոր հանգամանքները և հնարավորություն կտա կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում (...):

Այսպիսով՝ հիմք ընդունելով վերոշարադրյալը, իրենց համակցության մեջ գնահատելով նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները և հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրությամբ, քրեական դատավարության օրենսգրքի՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի համաձայն՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: Թեև, սույն քրեական գործով կատարված նախաքննությամբ հաստատվել է, որ Հայկ Կիրակոսյանը Մարիամ Զախոյանից և Ռոբերտ Դավթյանից պահանջել է հեռանալ սուպերմարկետի դիմացից, սակայն, բացի գործով շահագրգիռ անձ հանդիսացող Մարիամ Զախոյանի և Ռոբերտ Դավթյանի ցուցմունքներից, այլ ապացույցներ ձեռք չեն բերվել առ այն, որ Հայկ Կիրակոսյանը տեղեկացված է եղել Մարիամ Զախոյանի և Ռոբերտ Դավթյանի՝ պատգամավորի թեկնածու հանդիսանալու մասին: Հարկ է փաստել, որ Մարիամ Զախոյանը վարույթն իրականացնող մարմնին ներկայացրել է տեսաձայնագրություններ, որոնցում պատկերված է իր, Ռոբերտ Դավթյանի և Հայկ Կիրակոսյանի միջև տեղի ունեցած խոսակցության մի մասը: Տեսաձայնագրությունների զննմամբ պարզվել է, որ Մարիամ Զախոյանը և Ռոբերտ Դավթյանը Հայկ Կիրակոսյանին չեն տեղեկացրել, որ իրենք պատգամավորի թեկնածուներ են, այլ հակառակը, Մարիամ Զախոյանը հայտնել է, որ լրագրող է, ուստի, նման պայմաններում Հայկ Կիրակոսյանի արարքում բացակայում է ուղղակի դիտավորությամբ Մարիամ Զախոյանի և Ռոբերտ Դավթյանի նախընտրական քարոզարշավ իրականացնելու լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու հանցակազմը: Նման պայմաններում, գտնում եմ, որ անհրաժեշտ է Հայկ Կիրակոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածով քրեական հետապնդում չիրականացնել՝ վերջինիս արարքում տվյալ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով:

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտոնեական լիազորությունների չարաշահումը պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելն է՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը):

Հիշյալ հոդվածի դիսպոզիցիայից հետևում է, որ դրանով նախատեսված հանցագործության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներն են՝ 1) հանրորեն վտանգավոր արարքը, այն է՝ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը, 2) հանրորեն վտանգավոր հետևանքը, այն է՝ անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ

պետության օրինական շահերին էական վնաս պատճառելը (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը), 3) պատճառական կապը հանրորեն վտանգավոր արարքի և հանրորեն վտանգավոր հետևանքի միջև:

Հանցագործությունը կարող է կատարվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ: Գործողությամբ հանցանքը կատարելու դեպքում պաշտոնատար անձն ակտիվորեն օգտագործում է իր ծառայողական լիազորությունները, իսկ անգործության դեպքում չի կատարում իր պարտականությունները:

Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու սուբյեկտիվ կողմը բնութագրվում է մեղքի դիտավորյալ ձևով, սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ են նաև հանցագործության շարժառիթները՝ շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունը և խմբային շահերը:

Ինչ վերաբերվում է ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Ապարանի բաժնի ՊՊԾ դասակի ոստիկաններ Արտուշ Սահակյանի և Տարոն Մալխասյանի կողմից միջադեպին ականատես լինելուն, սահմանված կարգով ընթացք չտալուն և դրանով պայմանավորված՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու ենթադրյալ հանցանքին, ապա հարկ է նշել, որ կատարված նախաքննությամբ որևէ ապացույց ձեռք չի բերվել, որ Արտուշ Սահակյանը և Տարոն Մալխասյանը տեսնելով միջադեպը չեն միջամտել և ունեցել են որևէ շահագրգռվածություն, իրենց պարտականությունները չեն կատարել կամ իրենց պաշտոնեական դիրքն օգտագործել են ծառայության շահերին հակառակ և արդյունքում էական վնաս պատճառել անձանց կամ կազմակերպությունների, հասարակության կամ պետության իրավունքներին և օրինական շահերին, հետևաբար նրանց նկատմամբ անհրաժեշտ է քրեական հետապնդում չիրականացնել՝ արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով նախատեսված հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 55-րդ, 124-127-րդ, 261-263-րդ հոդվածներով և 290-րդ հոդվածի 3-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Սույն քրեական գործով վարույթը հանցակազմի բացակայության հիմքով կարճել և Հայկ Կիրակոսյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել՝ նրա արարքում ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2.Արտուշ Սահակյանի և Տարոն Մալխասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով քրեական հետապնդում չիրականացնել՝ նրանց արարքներում հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

3.Որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկել սույն գործի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին՝ որոշման օրինականությունը ստուգելու նպատակով:

4.Որոշման պատճենն ուղարկել Մարիամ Զախոյանին, Ռոբերտ Դավթյանին, Հայկ Կիրակոսյանին, Արտուշ Սահակյանին և Տարոն Մալխասյանին՝ պարզաբանելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը կարող է

բողոքարկվել վերադաս դատախազին՝ որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի կայացրած որոշումը՝ դրա պատճենը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում կամ, եթե 7 օրվա ընթացքում դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում, կարող է բողոքարկվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան:

ՀՀ հատուկ քննչական ծառայության
հատկապես կարևոր գործերի քննիչ՝ Վ.Մ.Սիմոնյան